Գոմք

Վարչական ղեկավար՝ **Մխիթար Հովհաննիսյան**

Հեռախոս՝ +374 94737272

Բնակչության թիվը՝ 241

Վայոց ձորի շատ հին շեներից է Գոմքը: Այն գրով հիշատակված է Ստեփանոս Օրբելյանի <<Սյունիքի Պատմությունը>> մեծարժեք երկում: Մեծանուն պատմիչը պարզել է, որ Գոմք գյուղը վեց չափ հարկ է տվել Տաթևի վանքին, ինչն էլ նշանակում է, որ շենը եղել է ոչ շատ մեծ:

Գյուղն այդպես էլ հիշատակված է՝ <<Գոմք>> և հիմնազուրկ է այն ենթադրությունը, թե դա հին Գոմեր գյուղն է:

Շենը եղել է ոչ շատ մեծ, սակայն աչքի է ընկել իր մի հրաշալի զարդով, որը մեր բազմադարյան ճարտարապետության եզակի նմուշներից է: Դա որմնափակ խաչքար-մատուռն է՝ իր կառուցվածքով, մտահաղացմամբ, քանդակներով և վիմագիր հիշատակարաններով մի անգնահատելի կոթող: Ըստ պահպանված արձանագրության՝ Խաչքար- մատուռը կառուցվել է 1263 թվականին:

Գյուղամիջում գտնվում է եկեղեցու ավերակներ, որն իր ոճով ավելի շատ նման է 16-17-րդ դարերի ճարտարապետական աշխատանքներին:

1989թ-ին լքված գյուղ են եկել Սումգայիթից, Բաքվից, Կիրովաբաթից և այլ վայրերից մազապուրծ փախած առաջին հայ բնակիչները: Գոմք համայնքը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանի, Ախտա գետի ափամերձ լանջերի վրա, ծովի մակարդակից 1800մ բարձրությամբ: Այն գտնվում է մարզկենտրոնից 35 կմ հեռավորության վրա:

Սահմանակից է Զառիթափ և Արտավան համայնքներին և Նախիջևանին: Բնակչությունը հինականում զբաղվում է անասնապահությամբ ու հողագործությամբ:

Համայնքում գործում է դպրոց, բուժկետ: